

Ամենայն Հայոց Հայապետության ազգենսի տեղակալ Տ. Գեվորգ արքեպիսկոպոսը հայրենական պատերազմի օրերին հայ ժողովրդին ուղղել է հետևյալ կոչերը, որոնցով հայ ժողովրդին հորդորում է համախմբվել Սովետական Հայրենիքի տուրքը և ամուր կռիվով պատգամել իր անկախությունը:

## ԿՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԻՒՆ

«Վասն Սիրոյի ոչ լռեցից և վասն  
Նրուսաղէմի այ մերեցից»:

Վնչ էլ դա գլխիս, —ասում է մարգարեն, —ես Սիրոյն ու Նրուսաղեմը, իմ հայրենի քաղաքն ու տաճարը մոռանալ չեմ կարող:

Մեր հայրենիքը Մայր Հայաստանն է: Հայ ժողովրդի սրբություն սրբոցը՝ Ս. Էջմիածինը, հայ եկեղեցու ծագման ու հաստատության օրրանը և նրա կենտրոնը:

Հանուն հայրենիքի, հանուն մեր հավատի և խղճի ազատության բողոքելով անարդարությունների և օտար բռնակալության դեմ՝ մեր նախնիքը դարեր շարունակ կյանքի և մահվան պայքար են մղել բռնակալության դեմ, որ մարմնի գերության հետ հոգու գերության էր ձգտում:

Հայ ժողովրդի այս դուցադնական պայքարի և դիմակայության ողին ցայտուն արտահայտված է Վարդանանց պատերազմի մեջ: Հայ պատմության այդ շրջանում հայ մարդու համբերության բաժակը լցված էր օտար բռնակալների անարդարության երեսից:

Բողոքող ուժգին ձայն էր պետք, հերոսական հոգի էր պետք, պայքարող ուժ էր պետք, արդարության ձայնը հնչեցնող և նրա դրոշակը բարձր պահող էր պետք: Եվ ահա Հայրենիքի սիրով վստոված, քրիստոնեական հոգով դատարարելով, հայ ժողովրդի ազատության համար զոհվելու պատրաստ կանգնած է մեր առաջ քաջ Վարդանը:

Նա կանգնած է որպես հաղթական հերոս, հավատարիմ, անկաշառ և անդամաճան սպասափորը հայ ժողովրդի: Նա

մարմնացումն է հիգեորդը դարի ոգու և արտահայտիչը հայ ժողովրդի բնութագրի՝ արդարամտության, անձնվիրության և ազատասիրության:

Այս առթիվ հիշենք և լսենք հայ մեծ պատմադրի ոսկեծղի Նդիշին:

Քրոջ մեր արյունը թափվի մարտիբոսների արյան նման, միայն թե մեր հայրենիքն ու եկեղեցին չընկնեն հեթանոսների ձեռքը:

Մի՞թե կարելի է չողկվորվել, տեսնելով երիտասարդների կտրճությունը, որոնք ի սեր արդարության և համարտության գերադասում են հաղթական մահը, քան անաբղ կյանքը: Մի՞թե հնարավոր է չնուշվել, տեսնելով կանաչ և օրորդեների անձնվիրությունը հանուն հայրենիքի և խղճի ազատության:

Այսպես էին մեր նախնիքը, որոնց պարտական ենք մեր ազգային և կրօնական կյանքը՝ մեր զոյությունը:

Վարդանանց հաղթական ողին ապրել ու ապրում է տակավին մեր մեջ և այսօր:

Մենք չպիտի մոռանանք հայ ժողովրդի անցյալում կրած տառապանքներն ու զրկանքները, կոտորածներն ու գերեզմանությունները: Մենք միշտ պիտի հիշենք, որ անցյալում բազմիցս մեր երկիրը եղել է օտար բռնակալների և վայրագ ու անխիղճ ազգերի մրցության տապալել, որի հետևանքով աղերակների կույտ էր դարձել:

Հայ եկեղեցին օրհնել է հայ ժողովրդի հերոսական դիմակայության ողին, ներշնչել է ազգային անկախության դադափորը, մշակել է ազգային խնդիրները:

ստեղծության զգացումը և, խաչն ու ալիւ-  
ստարանը մեռեալն քաղաքիս չալ հայ դորքը,  
դեպի հաղթութիւնն է առաջնորդել նրան:

Իմ սիրելի հայ զավակները:  
Մենք այսօր հիշում ենք մեր նախ-  
նայաց հերոս և անմահօրն ողբին, մեր բազ-  
մաշարձար ժողովրդի բազմիցս կրած տա-  
ռապանքներն ու զրկանքները այն պատ-  
ճառով, որ այսօր դամկէլյան սրի պէս  
վերատին կախված է մեր հայրենիքի, ժո-  
ղովրդի և եկեղեցու գլխին ստրկացման  
վտանգը:

Հանդես է եկել մի նոր բերս ույժ՝  
Փաշիզմը, որ հակառակ է ազատութեան  
և կուլտուրայի, թշնամի է քրիստոնեական  
եկեղեցուն, կեղեքել՝ ամբողջ մարդկու-  
թեան:

Փաշիզմը կրողն է բանապետութեան և  
պատերազմի, ալիւրդը ժողովրդի ստեղծած  
նյութական և կուլտուրական արժեքներին:  
Փաշիզմը կողոպտուի և մահուան գրույթ  
է:

Հենց այդ Փաշիստական բերս ույժն  
է, որ նեղաբար ներխուժել է մեր երկի-  
րը, ալիւր ու մահ բերելով իր հետ:

Փաշիզմը ծրագրել է վերահաստատել  
մեր երկրում ցարիզմը: Նա սպառնում է  
իշխան Սովետական Միութեան բոլոր  
ուսպուրիականներին, նույնպէս նաև Հայ-  
կական ուսպուրիկային՝ առաջ բերել  
ոհակցեալ և ստրկացնել:

Քոստ և ալիւի տարի է, որ Սովե-  
տական Միութեանը վարում է խաղաղա-  
սեր քաղաքականութիւն: արտաքին աշ-  
խարհի նկատմամբ և իր ամբողջ մտաւոր,  
բարոյական և նյութական ույժը արմա-  
ղբել է Սովետական Միութեան երկրների  
շինարարութեան, նրա բազմեանդ ժո-  
ղովուրդների հզորացման և նրանց մտաւոր  
ու ազգային կուլտուրայի զարգացման:

Ինչպէս արևի կենսատու ճառագայթ-  
ների ազդեցութեան շնորհիւ զգոթանում  
ու կենդանանում է թառամած ծաղիկը,  
այնպէս էլ մեր Մայր Հայաստանը ուսու-  
մեծ ժողովրդի աշխուհութեան շնորհիւ ազ-  
գատութեան ճերաններից և ալիւրակների

ծոցից ելնելով, վերակենդանացավ և դար-  
ձավ զորավոր ու հարուստ երկիր: Հայ  
քրտնախան ժողովուրդը այդ տարիներին  
ընթացում ստեղծեց նյութական ու կուլ-  
տուրական շատ արժեքներ:

Մեր ժողովրդի և եկեղեցու թշնամի-  
ները հայութիւնը յիստիլու նպատակով  
տարածեցին մոլորեցուցիչ լուրեր, որ իբր  
թե Սովետական իշխանութիւնը կործա-  
նում է հայ եկեղեցու կենտրոնը՝ Ս. Էջմի-  
ածինը: Որ Սովետական իշխանութիւնը  
չի միջամտում եկեղեցական գործերին և  
որ Սովետական Միութեան մէջ պահպան-  
ված է խղճի ազատութիւնը, այդ հաստա-  
տում է նորերս Ս. Էջմիածնում գումարված  
Աղգային՝ եկեղեցական ժողովը արտա-  
սահմանյան թեմերի պատգամավորների  
մասնակցութեամբ: Նույնը հաստատում են  
Սովետական երկրի բազմաթիւ քաղաքնե-  
րում գոյութիւն ունեցող հայ եկեղեցիները:

ՀԱՅԸ՝ ԲԱՅԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍ-  
ՏԱՆԻՑ՝ ՉՈՐՆԻ ԱՅԼ ՀԱՅՐԵՆԻՔ: Հայր  
Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն  
կռուան, բայց եթէ հայ եկեղեցին և նրան  
գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետու-  
թիւնը Ս. Էջմիածնի Հայրապետական  
Աթոռով:

Աշխարհի բոլոր ազգերի կատարյալ  
համակրանքը և Սովետական Միութեան  
200 միլիոն ժողովրդի միակամ և միախոր-  
հուրդ գործելակերպը, որով նա հայրենի  
սրբազան պատերազմ է մղում իր հայրենի-  
ների, նրա քաղաքական ազատութեան և  
տնտեսական ու կուլտուրական նմանութե-  
րի պաշտպանութեան համար, զբաղական  
է Սովետական Միութեան վերջնական  
հաղթութեան:

Աշխուհի Սովետական Միութեան նը-  
շանակում է աշխուհի հայրենիքին: Սովե-  
տական Միութեան հաղթանակը հաղթա-  
նակն է նաև հայ ժողովրդին:

Ամեն հայ մարդ, որ նախանձախղիւր  
է իր հայրենիքի, Սովետական Հայաստանի

բարդավաճման, կաշկեցի անշուշտ և թշնամուհ և ապրեցնել մեր ազգը:  
 կապալուղանի Սովետական Միությունը: Թող Տերը անսասան պահե Սովետա-  
 Թող ընդմիշտ կենդանի մնա մեր մեջ կան երկերը՝ յուրախություն Սովետական  
 վարդանանց պայքարի ու դիմակալության Միության ժողովուրդներին և ամբողջ քա-  
 ողին, որը միայն կարող է հաղթել անօրեն զաքակիրթ մարդկության:

ՆԱԽԱԳԱՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ,  
 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ  
 ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ

30 հուլիսի 1941 թ.

Ս. Էջմիածին